ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«19» հոկտեմբերի 2024թ. No 1/1-9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Անսերվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԾՁԲ-23/16**

Մասնակից՝ **«Անսերվ» ՍՊԸ**
/ՀՎՀՀ՝ 08265173, գործունեության հասցե՝ ք. Երևան, Վ. Վահեյան փ. 52տ./

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.11.2023թ. հայտարարվել է ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԾՁԲ-23/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել նաև «Անսերվ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 11.12.2023թ.-ին կայացած նիստում «Անսերվ» ՍՊԸ-ին ճանաչել է որպես ընտրված մասնակից 1-ին և 3-9-րդ չափաբաժինների համար և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով 27.12.2023թ-ին մասնակցին ներկայացրել է ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԾՁԲ-23/16-1 ծածկագրով պայմանագրի նախագիծը: Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում «Անսերվ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԾՁԲ-23/16-1 ծածկագրով պայմանագիրը 7-րդ չափաբաժնի մասով:

08.01.2024թ. թիվ 4 որոշմամբ հանձնաժողովի անդամների կողմից իրականացրած գնահատման արդյունքում հանձանաժողովը որոշել է 7-րդ չափաբաժնի մասով զրկել «Անսերվ» ՍՊԸ-ին պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես

գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Անսերվ» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Անսերվ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ **«Անսերվ» ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՔԱՐՏՈՒԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ